ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 89 - Ա
03 ապրիլի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով ս.թ. մայիսի 12-ին իմ ղեկավարությամբ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն նախապատրաստելու և անցկացնելու համար **հաստատել՝**

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
3) Ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը համաձայն N 3 հավելվածի:

2. ՈՒսումնավարժությանը ներգրավել՝

1) մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին.
2) տարահանման հանձնաժողովին.
3) մարզային փրկարարական վարչությանը.
4) ՀՀ ՊՆ Սևանի կայազորի ներկայացուցիչներին.
5) ՀՀ ՏԿ և ԱԻՆ հրդեհային և տեխնիկական անվտանգության մարզային տեսչությանը.
6) ՀՀ ՏԿ և ԱԻՆ հիդրոօդերևութաբանական ծառայության մարզային ստորաբաժանմանը.
7) Գավառ համայնքի ղեկավար կազմին.
8) Նորատուս համայնքի ղեկավար կազմին.
9) Գավառի աղետների բժշկության խմբին.

10) ՀՀ ոստիկանության Գավառի բաժնից 1 խումբ.

11) Գավառի ԳԳՄ վթարավերականգնողական խմբին,

12) <Գավառ> էլցանցի վթարավերականգնողական խմբին:

3. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Է. Գալստյանին՝

1) ապահովել ուսումնավարժությունը նախապատրաստելու և անցկացնելու փաստաթղթերի ժամանակին մշակումը և սահմանված ժամկետներում ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

3) ճշգրտել «ՈՒժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը».

4) ճշգրտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները, դրանց օգտագործման կարգը.

5) ճշգրտել համապատասխան կառույցների միջև փոխգործողությունների պլանները.

6) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև ս.թ. մայիսի 10-ը:

4. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները.

2) ուսումնասիրել ենթակա պաշտոնատար անձանց խնդիրներն ու պարտականությունները և կատարել նրանց հրահանգավորում.

3) ապահովել արձագանքող ուժերի և անհրաժեշտ միջոցների պատշաճ ներգրավումն ուսումնավարժության գործնական միջոցառումների անցկացման ընթացքում՝ համաձայն ուսումնավարժության գործնական միջոցառումների անցկացման պլանի: Գործնական միջոցառումներին ներգրավված ուժերը համալրել հաշվեցուցակային գույքով և հանդերձանքով.

4) ուսումնավարժությանը նախապատրաստվելու հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

5) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

6) գործնական միջոցառումների անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«03» ապրիլի 2015թ. N 89-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ Գեղարքունիքի մարզում անցկացվող հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում Անուն Ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ գնդապետ Է. Գալստյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ
2	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ	փ/ծ փոխգնդապետ Հ.Աբրահամյան	մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ,
Խաղարկման և վերլուծման խումբ			
3	խմբի պետ	փ/ծ մայոր Դ. Մանուկյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
4	խմբի անդամ	փ/ծ կապիտան Վ. Գորոյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ
5	խմբի անդամ	փ/ծ լեյտենանտ Ա. Պետրոսյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ
Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ.			
6	խմբի պետ	փ/ծ մայոր Գ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
7	խմբի անդամ	փ/ծ մայոր Ա. Առաքելյան	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
8	խմբի անդամ	փ/ծ լեյտենանտ Ա. Սիմոնյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ
	խմբի անդամ	փ/ծ կապիտան Ա. Բարսեղյան	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի թիվ 32 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյան

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«03» ապրիլի 2015թ. N 89-Ա որոշման

ԿԱԶՄ ՀՀ Գեղարքունիքի մարզում անցկացվող հրամանատարաշտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի

ՀՀ	Ուսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները	միջնորդներ	
		պաշտոնը	Ազգանուն անուն
1	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն, ՀՀ ՊՆ Սևանի կայազորի ներկայացուցիչ, «ԱրմենՏել» ՓԲԸ Գավառի ՀՏԿ, «ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղ	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Դ. Մանուկյան
2	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններ, տրանսպորտի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ	Վ. Գորոյան
3	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության, ՏԻՄ և ՀԳՄՏՍ վարչություններ, հասարակության հետ կապերի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ	Ա. Պետրոսյան
4	Գավառ, Նորատուս համայնքներ, ՀՀ ԱԻՆ հրդեհային և տեխնիկական անվտանգության մարզային տեսչություն, ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանական ծառայության մարզային ստորաբաժանում,	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ	Հ. Աբրահամյան
5	Մարզային տարահանման հանձնաժողով, Մարզպետարանի աշխատակազմի բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ	Հ. Հակոբյան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյան

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«03» ապրիլի 2015թ. N 89-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետներ	Պատասխանատու կատարողներ	Նշում կատարման մասին
1	2	3	4	5
	I. Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 02.04	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբ	
2.	Ուսումնավարժության վայրի տեղազննում	Մինչև 02.04	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբ	
3.	Մտահղացման մշակում (սխեմա, բացատրագիր)	Մինչև 02.04	Ղեկավարման շտաբ	
4.	ՀՇՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև 02.04	Ղեկավարման շտաբ	
5.	ՀՇՈ գործնական միջոցառումների պլանի մշակում	Մինչև 02.04	Ղեկավարման շտաբ	
6	ՀՇՈՒ իրավիճակի զարգացման պլանի մշակում	Մինչև 02.04	Ղեկավարման շտաբ	
7	ՀՇՈ միջնորդական կազմի անհատական պլանների մշակում	Մինչև 20.04	ՀՇՈ միջնորդական կազմ	
8	ՀՇՈ ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում	Մինչև 03.04	Ղեկավարման շտաբ	
9	ՀՇՈ փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 15.04	Ղեկավարման շտաբ	
	II. Ղեկավար և միջնորդական կազմի նախապատրաստում			
10	ՀՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև 21.04	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբ	
11	Միջնորդների հրահանգավորում	Մինչև 28.04	Ղեկավարման շտաբ	

III. Ուսուցանվողների նախապատրաստում				
12	ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանի ուսումնասիրում	Մինչև 27.03	Ղեկավարման շտաբ	
13	«Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման առանձնահատկությունները ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով սեմինար պարապմունքի անցկացում	15.04	Ղեկավարման շտաբ	
14	Գործնական միջոցառումների մասնակիցներին անվտանգության կանոնների հրահանգավորում	08.05	Գործնական միջոցառումների կազմակերպման խումբ	
IV. Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
15	Տեղամասերի նախապատրաստում	Մինչև 08.05	Ղեկավարման շտաբի պետ	
16	Շարժական կառավարման կետի նախապատրաստում	Մինչև 08.05	Ղեկավարման շտաբ	
17	Ուսումնավարժության ընթացքում օգտագործվող կապի միջոցների նախապատրաստում	Մինչև 11.05	Ղեկավարման շտաբ	

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյան